Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձոր մարզի «Քարագլխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՍՄ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- < Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում է սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10: 00-ից 15: 00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին ժամը 14: 00-ին Վայոց ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, գյուղ Քարագլուխ, 7 փողոց, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ +37498 88 40 31 հեռախոսահամարով: